


ՀԱՐՏԱՐԱՐՆԵՏՈՒԿԱՅԻՆԸ ԵՎ ԺԱՐԱՆԱԿԸ

Արծվին ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԷՍՏՈՆԱՑԻՆԵՐԸ մի հետաքրքիր լեգենդ ունեն այն մասին, որ իրենց մայրաքաղաքը երբեք չի դադարի կառուցվելուց:

Բայց ինչո՞ւ միայն Տալլինը: Աշխարհում և ոչ մի քաղաքի կառուցում էլ երբեք չի ավարտվի: Այդպես էլ ճարտարապետության արդիականության պրոբլեմը երբեք չի կորցնի իր ակտուալությունը:

Վաղուց ի վեր ժողովրդի մեջ տարածված է «քարերը խոսում են» արտահայտությունը: Եվ իրոք, տարբեր դարձրջաններին պատկանող ճարտարապետական հուշարձաններից լավագույնները ասես իրենց ժամանակի պատմության քարե էջերը լինեն: Հատկապես ճարտարապետության մեջ՝ գիտության, տեխնիկայի և արվեստի այդ սինթեզում, իրենց վառ դրսևորումն են գտել դասակարգային հասարակարգի վարձագման տարբեր էտապները: Եվ բոլոր էտապներում էլ, լինի դա ստրկատիրական, թե կապիտալիստական, ճարտարապետությունն ուղղակի կապի մեջ է եղել էկոնոմիկայի հետ: Իշխող վերնախավն օգտագործել է այն՝ ամբողջ հասարակարգի վրա իր ազդեցությունն ունենալու համար: Մի՞թե եգիպտական փարավոնների հպորդության խորհրդանիշը չեն Նեղոսի ափին կերտված վիթխարի բուրգերը: Իսկ հունական տաճարներն ու միջնադարյան դղյակներ՝ դո-



Գիզեի բուրգերը կառուցված են մեր քվականությունից երեք հազարամյակ առաջ: Դրանք եգիպտական երեք փարավոնների՝ Քեոփսի, Նեֆերեի և Միկերինի դամբարաններն են: Ահռելի չափերը (Քեոփսի բուրգը 147 մ է եղել), հավերժական շինանյութը՝ ֆալք, կառուցվածքային միաձուլությունն ու երկրաչափական ձևը խորհրդանշում են Հին եգիպտոսի աստվածացված տիրակալների անսամման իշխանությունն ու հզորությունը:

Թական եկեղեցիներն ու վերածննդի շրջանի պալատները... Նրանք իրենց հասարակարգի ամենավառ բնորոշումն են: Դրանք կերտելիս ճարտարապետները մի նպատակ են հետապնդել՝ ճնշել հասարակ մարդուն, համոզել նրան գիտակցելու իր ոչնչությունը աստծո կամ աշխարհի ուժեղների առաջ:

Մեր երկրում ճարտարապետությունը, առաջին անգամ իր ամբողջ պատմության ընթացքում, դադարեց մի խումբ մարդկանց շահերին ծառայելուց: Սովետական ճարտարապետը հումանիստ է. նրա տրամադրության տակ հրեկայական նյութական միջոցներ կան, որոնք տնօրինելով նա առաջին հերթին մտածում է մարդու մասին, մարդու, որին կոչված է ծառայելու:

Անցյալի ֆրանսիական ճարտարապետները տասնյակ շեղեր են ստեղծել, բայց ահա թե ինչ է գրել նրանց մասին Նապոլեոնը ս. Հեղինեի կղզում. «Եթե ճարտարապետներին թողնես՝ նրանք կսնանկացնեն Ֆրանսիան»: Սովետական ճարտարապետներն ապատ են, բայց նրանք ոչ թե սնանկացնում, այլ հարստացնում են իրենց երկիրը:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ միշտ համաքայլ է ընթացել ժամանակի հետ: Նոր շինանյութերի երևան գալու, շինարարական տեխնիկայի կատարելագործման հետ մեկտեղ փոխվել է և ճարտարապետությունը: Եթե նախորդ դարաշրջանների ճարտարապետական բոլոր կոթողները կերտվել են աղյուսից ու քարից, ապա XX դարում դրանց փոխարինելու եկավ երկաթբետոնը: ճիշտ է, երկաթբետոնն «դարի» սկիզբն ընդունված է համարել 1867 թվականը (երբ Ժուլեֆ Մոնիեն պատենտ ստացավ), բայց երկաթբետոնն առաջին բնակելի շենքը կառուցվել է 1902 թ. Փարիզում, ճարտարապետ Օգյուստ Պերրեի կողմից: Ամեն հաջորդ տասնամյակ նոր կառուցվածքային հնարավորություններ է բացել երկաթբետոնի առջև: Նույնիսկ այժմ էլ այդ նյութի մեխանիկական հատկությունները լիովին չեն սպառվել, և դժվար է կանխագուշակել, թե ինչ է խոստանում երկաթբետոնն ապագայում: 25-ը որ 1943 թ. էր, որ խալացի ինժեներ Պետրո Ներվին երկաթբետոնից նավ կառուցեց, իսկ տաս տարի անց Ֆրեյսինեն նախապես լարված երկաթբետոնից պատրաստեց ինքնաթիռի թևեր:

Մենք ապրում ենք մի դարում, երբ գիտության աննախընթաց վերելքը, ատոմային էներգիան, միջմոլորակային թռիչքները մարդկանց մոտ ստեղծել են նոր տիպի մտածողություն:




Օղանավաշենք Օրլիի օղանավակայանում (Ֆրանսիա): Կառուցված է ֆրանսիական ակադեմիկոս ինժեներ և շինարար Ֆրեյսինեի նախագծով: Սա այն առաջին ճարտարապետական կառույցներից մեկն է, ուր նյութակալումն ու ձևը մի միասնական ամբողջություն են կազմում:




Վեհորեն բազմել է Հայաստանի ժողովրդական տնտեսության եվանումների ցուցահանդեսի զմբեր (ճարտարապետներ՝ Լ. Գևորգյան և Դ. Քաղեսյան):

Այն պատրաստված է հավաքովի ամրացված տարրերից:



Քաղաքի մեր մայրաքաղաք Քաղաքի: Կա-
ռավարական կենտրոնը, որ կառուցված է Օսկա-
րի մեջքի նախագծով, աչքի է ընկնում իր հարտա-
պետական օրիգինալությամբ և կոնստրուկտիվ լուծու-
մով: Որպես շինանյութ լայնորեն օգտագործված են
երկաթբետոնե ու մետաղը:



Նախկին շենքի նախագիծ Միլանում: Նախագիծ
Լեյիենակ Զիան Պաոլո Վալենտին ֆասադի հարտա-
պետությունը լուծել է ի վնաս առանձին բնակարան-
ների հատակագծմանը:

Նոր ձևով է մտածում և XX դարի ճարտարա-
պետը: Նա հաջողությամբ օգտագործում է
պողպատը, ապակին, պլաստիկները, որոնք ան-
սահման հնարավորություններ և նոր պատկերա-
ցումների ու ձևերի մի ամբողջ աշխարհ են բա-
ցում ճարտարապետության առաջ:

Հետաքրքրական է, որ անցյալի ճարտարապե-
տը հաստատելով ումանց իշխանությունը մյուս-
ների վրա, բնությանը ենթարկել է իր գաղա-
փարին: Եվ պատահական չէ, որ պալատական
պրոսպեկտներում երկրաչափական ձևին է են-
թարկված ոչ միայն հատակագծումը, այլև կա-
նաչ տնկուտների ձևավորումը: Խորանարդների
և գլանների ձևով խուլված ծառերն ու թփու-
տները այդպիսի պրոսպեկտներում կորցրել են ի-
րենց բնական գեղեցկությունը:

XX դարի ճարտարապետությունն իր լավա-
գույն նմուշներում ձգտում է անմիջական կապի
մեջ մտնել բնության հետ՝ հագադար վերաբեր-
մունք ցուցաբերելով վերջինի նկատմամբ: Ինչ-
պես և մյուս դարաշրջաններում, մեր դարում
նույնպես ճարտարապետությունը ժամանակի
յուրահատուկ հանրագիտարանն է՝ իր ժողո-
վրդի հոգևոր և նյութական կուլտուրայի բնա-
գավառում: Սակայն ճարտարապետության վար-
գացման ընդհանուր պրոցեսը կախված է ոչ
միայն հասարակական-տնտեսական պայման-
ներից, այլև կլիմայից, բնական միջավայրից,
տեղական շինանյութերից: Տեղական պայման-
ներ կոչվող այս գործոնների հանրագումարը ըս-
գալի դեր է խաղում ժողովրդական ճարտարա-
պետության ձևավորման մեջ: Իսկ ժողովրդա-
կան ճարտարապետությունը, որպես կանոն, ըն-
կած է ամեն մի ազգային կուլտուրայի, այդ
թվում և առհասարակ ճարտարապետության,
հիմքում: Ճարտարապետության ազգային ա-
ռանձնահատկությունները դրսևորվում են ինչ-
պես ձևի, այնպես էլ բովանդակության մեջ: Այդ
պատճառով, բնական պայմաններից բացի, ազ-
գային հատկանիշների ձևավորման վրա մեծ
ազդեցություն են գործում նաև ժողովրդի հոգե-
կան խառնվածքը, կրա պատմական վարգացման
առանձնահատկությունները:

Քիչ առաջ ասացինք, որ շինարարական տեխ-


8015-63

նիկայի վարձացման և նոր շինանյութերի երե-
վան գալու հետ մեկտեղ փոխվում է նաև ճար-
տարապետությունը: Այո՛: Եվ այդ փոփոխու-
թյունները գնում են տարբեր երկրների ճարտա-
րապետությունների ինտերնացիոնալ մերձեցման
ուղիով: Մերձեցման, բայց ոչ սահմանների վե-
րացման: Սովետական ճարտարապետները վրձ-
ռականորեն դեմ են կոսմոպոլիտիզմին ճարտա-
րապետության մեջ: Մեզ մոտ միևնույն հասա-
րակական-տնտեսական պայմաններում հաջո-
ղությամբ վարձանում է ալգային ռեսպուբլի-
կաների ճարտարապետությունը: Միայն իրենց
հատուկ ճարտարապետական կերպարն ունեն
Մոսկվան, Կիևը, Երևանը, Թբիլիսին և շատ այլ
քաղաքներ:


Թե ժամանակի ընթացքում ինչպես է փոխվում
ճարտարապետությունը, կարելի է հետևել ոչ
միայն տարբեր դարաշրջանների առանձին հու-
շարձանների, այլև քաղաքների հատակագծման
ու կառուցումների միջոցով: Բավական է թեկույ
համեմատել կապիտալիստական և սոցիալիս-
տական երկրների քաղաքները: Ուշադիր ծա-
նոթության և ուսումնասիրության դեպքում ան-
միջապես աչքի է խփում նրանց միջև եղած ըս-
տրուկ տարբերությունը:

Ֆրանսիական նշանավոր քաղաքաշինարար
Անդրե Լյուրսան կապիտալիստական քաղաք-
ների մասին գրում է, որ նրանցում «նկատվում
է սոցիալական դասակարգերի շերտավորում-
այստեղից էլ այն բոլոր հակասությունները, ո-
րոնք ծագում են այդ դասակարգերի միջև գո-
յություն ունեցող սոցիալական և տնտեսական
հարաբերություններից: Այդ հարաբերություն-
ների մասին պարզորոշ պատկերացում կարելի
է կալմել քաղաքների կառուցվածքով, նրանց
հատակագծերով և գոտիացումով, քաղաքի
տերիտորիայում շենքերի հատուկ դասավորու-
թյամբ, բնակչության խտության ցուցանիշներով,
և շենքերի ներքին հարմարությամբ ու նույնիսկ
արտաքին տեսքով»:

Հավագյոտ կապիտալիստական քաղաք
կարող է պարծենալ իր կառուցման ամբողջա-
կանությամբ: Նյու-Յորքն ու Տոկիոն, Փարիզն
ու Կահիրեն, Լոնդոնն ու Բոմբեյը, Հոմն ու



Մոտ ազդաշյուժ ալսպիսի տնսփ կունենա Երևա-
նի ամենամեծ արհեստագործական շրջաններից մեկի՝ Կոնդր-
Նեդիակների կոլեկտիվը (Է. Սարգսյան, Է. Պապյան
և Ս. Նազարյան)՝ ճարտարապետական հետաքրքի-
րությամբ և ունի այս շրջանին՝ ստեղծելով բարձրագույն
շենքերի առանձին խմբեր:



Վ. Ի. Անիկի ղամբարանը սովետական ճարտա-
րապետության հանձնարել գործերից է: Ոգեշնչված սո-
ցիալիստական ռևոլյուցիայի զաղափարներով ճարտա-
րապետ Ա. Վ. Շչուսեր ղամբարանի ճարտարապետա-
կան կերպարը կերտելիս հենվել է համաշխարհային
ճարտարապետության լավագույն նվաճումների վրա:
Վ. Ի. Անիկի ղամբարանը իսկական ժողովրդական
ոտեղծագործություն է, այն աչքի է ընկնում ձևերի
լակոնիզմով և գծերի խստությամբ:



ՌԵՊՈՐՏԱԺ

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆԻՑ

1958 թվականի սեպտեմբերին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնին կից ստեղծվեց մաթեմատիկոսներից և լեզվաբաններից կազմված ոչ մեծ խումբ, որն սկսեց զբաղվել մեխենայական բարգմանության հարցերով: Մի կողմից բարգմանող մեխենայի վերաբերյալ դեռևս չլուծված շատ հարցերի առկայությունը, մյուս կողմից աշխատողների անփութությունը հսկայական դժվարությունների առաջ կանգնեցրին երիտասարդ կոլեկտիվին: Բայց նրանք քաջ առ քաջ հաղթանակում են այդ դժվարությունները: Այդ աշխատանքների մասին համառոտ պատմում է Հաշվողական կենտրոնի մեխենայական բարգմանության լաբորատորիայի վարիչ ՎԱՍԻԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Երիտասարդ գիտաշխատողների խումբը մեքենայական թարգմանության աշխատանքները սկսեց մեր Միության մեջ և ԱՄՆ-ում կուտակված փորձի ուսումնասիրությամբ: Անց էին կացվում սեմինարներ, ընթերցվում էին հոդվածներ և հաղորդագրություններ: Կարճ ասած՝ ուսուցում էր գնում: Եվ, վերջապես, մի տարի անց՝ 1959 թ., երբ կադրերը հիմնականում պատրաստ էին, անցանք բուն

Ջիբուրին՝ կապիտալիստական աշխարհի այս բոլոր մեծ ու փոքր քաղաքներն իրենց վրա կրում են հակադրությունների կնիքը: Այստեղ կարելի է տեսնել տարրական սանիտարա-տեխնիկական պայմաններից զուրկ հետնախորշեր, ուր պատսպարվում է ընչազուրկ բնակչությունը, և գեղեցիկ, հարմարավետ շենքերով կանաչավարդ թաղամասեր, որոնք պատկանում են տիրող դասակարգին:

Սոցիալիստական քաղաքում պատկերը միանգամայն այլ է:

Որպես օրինակ վերցնենք Երևանը: Ավագ սերնդի ներկայացուցիչները լավ են հիշում, թե ինչպիսին էր այն XX դարի սկզբներին: Դա մի սովորական, շարքային ասիական քաղաք էր՝ կավաշեն տներով և ծուռումուռ, փոշոտ փողոցներով: Իսկ ինչպիսի՞ն է Սովետական Հայաստանի մայրաքաղաքն այժմ: Կարելի՞ է արդյոք համեմատել այն թեկուզ և քառասունական թվականների Երևանի հետ:

Ոչ այնքան հեռու անցյալում ռեսպուբլիկայի քաղաքաշինության պրակտիկայում տեղ էին գտել լուրջ թերություններ: Դա մասամբ վերաբերում է Երևանի հատակագծման ձևերին և բնակելի թաղամասերի կառուցմանը: Ցուցադրական շքեղությամբ՝ անցյալի այդ ախտով հրապուրվելը հանգեցրեց այն բանին, որ բնակելի թաղամասերը կառուցվում էին հոծ շրջագծով: Թաղերի ներսում, որպես կանոն, շարունակում էին մնալ տասնյակ միահարկ տներ: Բնական է, որ նման պայմաններում ներթափանցանալի տերիտորիայի բարեկարգման մասին խոսք էլ չէր կարող լինել: Շենքերի դիրքը որոշում էին ոչ թե ելնելով այն բանից, թե ինչպես ավելի լավ օգտագործել ռելիեֆի առանձնահատկություններն ու տալ լավագույն դիրքավորում, այլ՝ հարմարեցնելով փողոցին: Թերություններից չուրկ չի մնացել նույնիսկ Կիևյան փողոցը, որի շինարարությունն սկսվել է հիսունական թվականներին և շարունակվում է մինչև օրս: Այստեղ, ի վնաս առանձին բնակարանների հատակագծման, «գեղեցկացված է» ֆասադը: Բայց չէ որ կարևորը ֆասադի դեկորատիվ բանդակումը չէ: Եվ վերջապես

գլխավոր ֆասադ հասկացողությունն էլ բնակելի շենքերի ճարտարապետության մեջ ժամանակի ընթացքում կորցնում է այն իմաստը, որն ընդունված էր դեռ նրա բովանդակության մեջ:

Պարզ է, որ բնակարանային շինարարության վիթխարի պլանները ժամանակին կենսագործելու համար պահանջվում էր վճռակա՝ նապես հրաժարվել տրադիցիոն շրջագծային կառուցումից: Եվ ահա առաջ քաշվեց ամբողջ թաղամասի ծավալային-տարածական լուծման հարցը: Այժմ չի կարելի կասկածել, որ բնակելի թաղամասի (կամ ամբողջ շրջանի) ճարտարապետական արտահայտչականությունը ձեռք է բերվում տերիտորիայի հատակագծման ու կառուցման ձևերի նկատմամբ ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, ռելիեֆը ռացիոնալ օգտագործելու և ամբողջ թաղամասի կանաչապատսանն ու բարեկարգմանը արժանի ուշադրություն դարձնելու շնորհիվ:

Քաղաքաշինությունը հեռանկարային կանխորոշման գիտություն է և հենց այդ պատճառով էլ լավ քաղաքաշինարարը չի կարող այսօրվա խնդիրները չզուգակցել վաղվա հեռանկարների հետ: Նախագծելով մի բնակելի վանգված, որի շինարարությունը կարող է տևել բավական երկար ժամանակ, չի կարելի սահմանափակվել գեթ այսօրվա օրով: Ժամանակակից պայմաններում քաղաքային բնակելի վանգվածի նախագծման ստեղծագործական ճիշտ լուծման օրինակ է նոր բնակելի շրջանը Հրապղանի աջափնյա մասում:

Երևանցիները լավ են հիշում գետի անապատային աջափը՝ Շահումյանի շրջանում: Ընդամենը 10 տարի առաջ քամին այստեղ փոշու մոխրագույն ամպեր էր հանում երկինք: Իսկ այժմ երկնքի կապույտը ակոսում են վերամբարձ կռունկների «կնճիթները»: Այս նոր բնակելի շրջանը պեղեցնում է 450 հեկտար տարածություն: Նախագծված բոլոր 14 թաղամասերի շինարարության վերջնական ավարտից հետո կշահագործվի 734 հապար քառ. մ բնակելի մակերես: Դա նշանակում է, որ մեկ հոգուն 9 քառ. մ նորմայի դեպքում բնակարանով կապահովվի ավելի քան 81 հապար բնակիչ:

աշխատանքին: Ի՞նչ էր հարկավոր անել:

Նախ անհրաժեշտ էր որոշել, թե ո՞ր լեզվից ո՞րին պետք է թարգմանվեր: Ըստ որում հարկավոր էր հաշվի առնել մեքենայական թարգմանության այն առանձնահատկությունը, որ մեքենային պետք է «սովորեցնել» հիմնականում այն լեզուն, որից թարգմանվում է: Իսկ այն լեզուն, որին պետք է թարգմանվի ավելի հեշտ է «սովորեցնել»-ը և սկզբբունքորեն այնքան էլ հետաքրքիր չէ: Որոշվեց մեքենային «սովորեցնել» թարգմանել հայերենից ռուսերեն:

Իսկ ինչպե՞ս: Ամենից առաջ հարկավոր էր կազմել հայոց լեզվի բերականություն և բառարան, բայց ոչ այնպիսին, որ գոյություն ունի մարդկանց համար, այլ հատուկ՝ մեքենաների համար: Չէ որ մարդուն սովորեցնելիս ելնում են այն բանից, որ նա խորհում է, մտածում, մտահանդման համար օգտագործելով դեղուկցիան, իսկ ընդհանրացման համար՝ ինդուկցիան: Իսկ մեքենային պետք է «սովորեցնել» սկզբունքորեն այլ ձևով, օգտագործելով նրա ինքնատիպ տրամաբանությունը, ներքան հատուկ կիբեռնետիկական «մտածողությունը»: Նա կարող է հիշել փաստեր, թվեր, բառեր ու կանոններ, և՛ ինչպես վարվել այդ ամենի հետ:

Այսպիսով, անհրաժեշտ էր ավտոմատին այնպես սովորեցնել բերականություն, որ նա, օգտագործելով դա, կարողանա վերլուծել տեքստը և թարգմանել այն:

Ո՞րչափվեցին բերականական հիմնական հասկացողություննե-

րը, քերականական երևույթների դասակարգման սկզբունքները և մեքենային մատչելի քերականության գրառման հատուկ եղանակները: Բայց, իհարկե, հայերեն լեզվի ոչ բոլոր նրբություններն էին հաշվի առնվել: Նկարագրվեց միայն այն, ինչ առանձնահատուկ է առավել հաճախ հանդիպող շարահյուսական կազմություններին:

Այդ քերականությունը կազմելու վրա զնաց մոտ երկու տարի: Իսկ 1962 թ. վերջերին արդեն սկսվեցին մեքենայի վրա կատարվող աշխատանքները: Այսինքն սկսվեց քերականության և բառարանի գրառումը մեքենային մատչելի՝ ծրագրային լեզվով: Դա շատ բարդ և աշխատատար պրոցես է, որի վրա աշխատեց մաթեմատիկոսների մեր ամբողջ կոլեկտիվը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձված ծրագրային Տեր-Միքայելյանի ղեկավարությամբ:

Վերջապես հաջողվեց ստանալ մի քանի նախադասությունների թարգմանությունը:

Մեքենան բարձրագույն մաթեմատիկայի դասագրքից «կարդաց» հայերեն խոսքը և թարգմանեց այն ռուսերեն: Ահա մի օրինակ:

Հայերեն խոսքն է՝ «Մասշտաբի ընտրությունը պայմանավորվում է հետազոտվող մեծության բնույթով և այն հանգամանքներով, որոնց առկայությամբ կատարվում է չափումը»:

Թարգմանությունը. «Выбор масштаба уславливается характером исследуемой величины и теми обстоятельства-

ми, влияющими на измерение». Բնակելի շրջանի հատակագծային-տարածական լուծման մեջ տեղ են գտել ինչպես կանոնավոր, այնպես էլ ապատ (գեղանկարային) հատակագծման մեթոդները: Հարավում ռելիեֆը համեմատաբար մեղմ է, և փողոցային ցանցի հատակագծումն ու շենքերի դասավորությունը կանոնավոր են: Իսկ հյուսիսային մասում, ուր ռելիեֆը բարդ բլրաթմբային է, ուղղասլաց փողոցների անցումը՝ մեկից մյուսին սահուն է: Կոլտուր-կենցաղային սպասարկման սիստեմի ռացիոնալ կազմակերպման, սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավման և ինժեներական աշխատանքների կրճատման մեթոդներից մեկն էլ միկրոշրջանների ստեղծումն է: Սրանք խոշորացված թաղամասեր են կամ թաղամասերի խմբեր, որոնց սահմաններում բացառվում է համաքաղաքային տրանսպորտային երթևեկությունը: Հատկապես միկրոշրջանների անջատման սկզբունքն է՝ դրված Երևանի այդ նոր բնակելի շրջանի ճարտարապետական հատակագծման հիմքում:

Ահա թե ինչ է ասում մեր դարի խոշորագույն ճարտարապետներից մեկը՝ Յրանկ Լույզ Ռայթը. «Ճարտարապետությունը կյանք է, որն ինքն է ծնում իր ձևերը: Այդ պատճառով այն պետք է ստեղծվի բնությանը համապատասխան»: Իսկապես, մեր դարաշրջանի ճարտարապետությունը ձգտում է միաձուլվ կապի մեջ մտնել բնության հետ: Դա ակնառու կերպով երևում է նոր բնակելի շրջանների հատակագծերում: Ասվածի լավագույն օրինակը կարող է ծառայել Երևանի նոր բնակելի շրջանի հյուսիսային մասի հատակագիծն ու կառուցումը: Միկրոշրջանների խոշորացումն այստեղ պայմանավորված է բնական պայմաններով (ռելիեֆով), տրանսպորտի մագիստրալների ցանցով, բնակելի շենքերն ու բնակչությանը սպասարկող օբյեկտները առավել նպատակահարմար տեղաբաշխելու խնդիրներով:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագրում ասված է, որ երկրորդ տասնամյակի վերջում «... ամեն մի ընտանիք, ներառյալ նորապսակներին, կունենա բարեկարգ բնակարան, որը կհամապատասխանի հի-

գիենայի և կուլտուր-կենցաղային պահանջներին»:

Ընտանիքի և առանձին անհատի վարձացումը կոմունիստական հասարակարգում, ամեն մի մարդու համար բավականանի վարձացման պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, պահանջում են նյութական միջավայրի հետագա կատարելագործում, այն միջավայրի, որում ապրում և վարձանում է մարդը: Սկզբնական բնակելի կոմպլեքսի բնորոշ առանձնահատկություններից է այն փաստը, որ մարդու նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը չի սահմանափակվում անհատական բնակարանի սահմաններով, այլ ավելի ու ավելի հանրայնացված բնույթ է ձեռք բերում: Իսկ կուլտուր-կենցաղային սպասարկման ո՞ր օբյեկտներն են, որ բնակելի շենքերի հետ միասին կապում են միկրոշրջանի սկզբնական բնակելի կոմպլեքսը: Դրանք մանկապարտեզներն են, մանկամսուրները, դպրոցները, հիվանդանոցները, լվացքատները, ակումբները, սպորտային հրապարակները և այլն:

Բնակարանային շինարարության վարձացման մեջ գլխավոր գիծը հավաքովի և խոշորապանելային շենքերի կառուցումն է: Տնաշինական կոմբինատներ են ստեղծված և ստեղծվում են ՍՍՌՄ-ի շատ քաղաքներում: Լենինգրադում կան կոմբինատներ, որոնք թողարկում են բնակելի շենքի բոլոր շինարարական-կոնստրուկտիվ էլեմենտները և իրենք էլ կատարում մոնտաժը:

Տիպային նախագծերն իրենց հետ բերեցին շենքերի միօրինակության և տաղտկալիության վտանգ: Սակայն փորձը ցույց տվեց, որ բնակելի և հասարակական շենքերի խելացի տարածական տեղաբաշխման, ռելիեֆն ու տեղանքի բնական գեղեցկությունը ստեղծագործաբար օգտագործելու, գունային հարաբերությունների ճիշտ ընտրության և այլ հնարամտությունների դեպքում կարելի է խուսափել դրանից: Այդ տեսակետից մեծ դեր է խաղում նաև խոշոր պանելների ձևը, լուսամուտների չափերը, պատշգամբների ձևավորումը և այլն:

Այսպիսով, կառուցման նոր սկզբունքների և շինարարական նոր տեխնիկայի մեջ բնակելի

ми, которых наличием совершается измерение».

Ներկայումս մենք հասել ենք այն բանին, որ մեքենան թարգմանում է ոչ միայն իրարից անկապ նախադասություններ, այլև ամբողջական տեքստեր: Այդ խնդիրն անհամեմատ բարդ է, բայց հնարավորություն է տալիս գնահատել կատարվածը, լավ հասկանալ ծրագրերում և սխեմաներում եղած սխալները, հետագայում հավաքված նյութերն առավել խելացի մշակելու համար:

Երբ խոսք է լինում մեքենայական թարգմանության մասին, սովորաբար հարցնում են՝ կարո՞ղ է արդյոք մեքենան թարգմանել գեղարվեստական գրականություն: Այս հարցի ինչպես դրական, այնպես էլ բացասական պատասխանը չի կարելի համարել վերջնական: Ներկայումս աշխատանք է տարվում լեզվի ձևաբանական նկարագրության առավել ճշգրիտ մեթոդների մշակման ուղղությամբ: Դա մի ահռելի աշխատանք է, որտեղ ոչ միայն չի լուծված հարցերի մեծ մասը, այլև շատ հարցեր մնում են դեռևս առաջ չբաշխված: Երբեմն որևէ խնդրի վրա ամիսներով մտածելուց հետո համոզվում ես, որ սխալ է թույլ տրվել, և ուրեմն, հարկ է լինում սկսել նորից:

Սակայն մեր կոլեկտիվը հուսով է, որ իր առջև դրված կարևոր գիտական խնդիրը՝ լեզվի ձևական-կառուցվածքային առանձնահատկությունները ուսումնասիրելու և մեքենային թարգմանել սովորեցնելու ուղղությամբ, հաջողությամբ կլուծվի:

անսամբլների կազմակերպման անսահման լայն և չափազանց բազմազան հնարավորություններ են թաքնված:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պատասխանատու դեր է խաղում ամեն մի հասարակության կյանքի և վարձագման մեջ: Այդ դերը բնորոշվում է ճարտարապետության հոգևոր և նյութական էությունը: Նյութական կողմը այն անհրաժեշտ տարրերից մեկն է, որի բազայի վրա վարձանում է հասարակական կյանքը: Իսկ գեղարվեստական կողմը, որպես հոգևոր կուլտուրայի և արվեստի երևույթ, ճարտարապետությունը մերժեցնում է գաղափարական արվեստներին, որոնք իրենց ստեղծագործություններում մարմնավորում են հասարակական գիտակցությունը: Այդ պատճառով էլ ճարտարապետությունը արտացոլելով հասարակարգը ամբողջովին վերցրած, մեր հասարակության պայմաններում ինքը նյութապես և գաղափարապես ապոլում է կենցաղի վերակառուցման, մարդկանց էսթետիկական ճաշակի վարձագման վրա:

Սովետական ճարտարապետությունն այժմ գտնվում է իր վարձագման կարևոր փուլերից մեկում: Իսկ ճարտարապետների առջև մեծ ու պատասխանատու խնդիր է դրված՝ մեծ դարաշրջանին արժանի քաղաքներ ստեղծելու համար: Մեր ճարտարապետության այսօրը նայում է դեպի վաղը՝ դեպի կոմունիզմ:

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ... ԶՆԱԾ

Կեսօրյա հանգստի ժամն է: Ընդարձակ ննջասենյակում 13—15 տարեկան 20 աշակերտներ խաղաղ ֆնած են: Մահճակալների արանքով ֆայլում է ուսուցիչը: Տղաներն, իրոք, ֆնած են, բայց նրանք միաժամանակ... դաս են սերտում. լուծում են առաջարկված քվադրանկան խնդիրներ, կամ բերանացի սովորում հարկավոր պոեմը:

Այսպես են փորձում ուսուցանել Բերգամի Սեն-Վենսեն կոլեջում:

Աշխարհում առաջին անգամ կեսօրյա անգիստը անց է կացվում... դասերի ըն-

թացում: Հիպնոզի ուժով ֆնած երեխաները շատ ավելի արագ են կատարում առաջադրանքները, քան, եթե նրանք արթուն պահակեն: Բավական է մեկ անգամ նրանց համար կարգալ պոեմը, որպեսզի ամբողջ երկու տարի այն չմոռացվի:

Ավելի զարմանալի մի բան էլ կա. եթե ուսուցիչը դասի ընթացքում այլ բան է սովորեցնում, ապա արքնանալուն պես երեխաներն այն անմիջապես դուրս են նետում իրենց հիշողությունից, ինչպես ավտոմատը՝ կեղծ կոպեկը:

Այդ արտասովոր նախաձեռնության հեղինակը՝ դոկտոր Մարիո Բելլինին, հիպնոզոդի իր ընդունակությունը չի օգտագործում երեխաներին ֆեցեցնելու համար: Նա օգտագործում է միայն ձայնապնակներ, որոնք հնարավորության սահմաններում քույլ են տալիս այդ մեթոդը կիրառելու նաև այլ դպրոցներում:

Բելլինիի վկայությամբ, տղաների ուշադրությունը չեն գրավում ոչ բզզացող ճանները, ոչ զանազան հետաքրքրություններով լի փողոցի աղմուկը: Նրանց ուշադրությունը կենտրոնանում է միայն առաջադրանքի վրա:

Այս մեթոդով սովորող ֆսան համեմատաբար էտ մնացող աշակերտներ մի քանի ամսվա ընթացքում հասել են իրենց՝ առավել ընդունակ ընկերների մակարդակին:

Չնայած ակներև է ուսուցման արդյունքը, բայց Մարիո Բելլինիի մեթոդը շատերը ֆրենդադատում են:

— Զէ որ,— ասում են նրանք,— նման ուսուցման դեպքում երեխաները գտնվում են պասսիվ վիճակում և չեն կարող ակտիվ մասնակցություն ունենալ գիտելիքների ձեռք բերման գործում, որը անհրաժեշտ նախապայման է այդ գիտելիքները կյանքում օգտագործելու համար: Այս ձևով լավագույն դեպքում երեխաներին կարելի է դարձնել հրաշալի կենդանի բառարաններ, մինչդեռ իսկական մանկավարժությունը նրանց մեջ բազմազան հետաքրքրություններ է արթնացնում: